պէտք է մտցնէր Հայաստանի գանձարանը 3 միլիոն ոսկի ռուբլի, որը պէտք է ապահովէր մենաշնորհի բարեխիղճ իրագործումը: Բացի այդ, ընկերութիւնը գնելու էր կէս միլիոն ոսկի ռուբլի գրաւ. պայմանագրի կէտերի լուրջ խախտման դէպքում գրկւելու էր գրաւից:

Այս պայմանագիրը, հաղորդակցութեան նախարարութեան առաջարկութեամբ քննուեց Հայաստանի Տեխնիկական Ընկերութեան նիստերում և, ընդհանուր առմամբ, արժանացաւ դրական գնահատութեան: Յետոյ, խորհրդակցութեան նիւթ դարձաւ հաղորդակցութեան, ելևմտական և արդարադատութեան նախարարութեանց ու պետական վերահսկողութեան ներկայացուցիչների և մի շարք մասնագէտների խառն նիստերում, որից յետոյ, յունիս 29-ին, հաղորդակցութեան նախարարը նախագիծը ներկայացրեց նախարարների խորհրդին ի հաստատութիւն: Բաթում—Կարս երկաթուղագծի մասին կային և օտար առաջարկութիւններ. կառավարութիւնը դերադասում էր հայկական դրամագլուխը: Բացի այդ, նա կամենում էր, որ բաժնեթղթերի կարևոր մէկ մասը տրւի պետութեան, որով վերջինս դառնալու էր երկաթուղու սեփականատէրերից մէկը:

Հայաստանի ժողովրդական տնտեսութեան մէջ աչքառու դեր էր խաղում և Խնամ. Նախ. Աշխատանքի Բաժանմունքը, որ ամբողջ երկիրը պատել էր արհեստանոցների, գործարանների և աշխատանոցների ցանցով: Ա. 1 օգ. Բաժանմունքը ունէր հետևեալ ձեռնարկութիւնները. Երևանում՝ ջուլհականոց (կտաւ), վերանորոգումների բաժին, կարուձևի արհեստանոց, փականագործարան, ատաղձագործարան. Սարըղամիշում՝ տախտակի սղոցարան, ջուլհականոց (կտաւ), ատաղձագործարան, փայտի չոր թորման, որ պատրաստում էր սև ճիւթ, ածուխ, սոսինձ և այլն. Ալեքսանդրապոլում՝ ջուլհականոց (բրդեղէն), 2րդ ջուլհականոց (կտաւ, դուլպայ). Կարսում՝ ջուլհականոց (բրդեղէն), կաշեգործարան. Էջմիածնում՝ կօշկակարանոց, ջուլհականոց (կտաւ), Դիլիջանում՝ ջուլհականոց (բրդեղէն), շինուածանիւթերի արհեստանոց, կահկարասիքի արհեստանոց. Նոր-Բայազէտում՝ կօշկակարանոց, ջուլհականոց (բրդեղէն). մանարան Բաշ-Աբարանում, ջուլհականոց (բրդեղէն) Ջալալ-Օղլիում, կօշկակարանոց Ղամարլուում, մանարան Սարդարապատում, բրուտանոց Իւվայում և այլն: Կտաւի, մահուդի, կօշկեղէնի մի ահագին մասը երկրում հոգացւում էր այս արհեստանոցներից. որբանոցների և բանակի սպիտակեղէնը, վրայի հագուստը կարւում էին հայկական կտորներից: Լուրջ յաջողութիւն ունէին, յատկապէս, կաշեգործարանները. Բաժանմունքը ձեռնարկել էր երկու մեծ գործարանների շինութեան գիտութեան վերջին յարմարութիւններով: Բաժանմունքի ղեկավարն էր Ակունեանը:

Պետական կարևոր գործօն էր և մայիս 8-ին հաստատւած «Գլխաւոր Ճարտարապետի Վարչութիւնը» խնամ. նախարարութեան կից՝ ակադ. Ալ. Թամանեանի ղեկավարութեան տակ: Այս հիմնարկութիւնը լինելու էր Հայաստանի վերաշինութեան կենտրոնական աղդակը: Ա. Թամանեանի հմուտ